ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.04.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-ԳԲԽ-99/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.07.2016թ. թիվ 1/73-3/18983-16 գրությամբ ներկայացված «Էսկուլապ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01215786) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-99/16 բողոք), ինչպես նաև ՍՑ-ԳԲԽ-99/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 11.04.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.02.2016թ. թիվ 1/73-3/6818-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ (այսուհետ նաև՝ Կենտրոն) խնդրելով ուսումնասիրել «Էսկուլապ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ

միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար՝ կից ներկայացնել «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.11.2015թ. թիվ 158 և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում Կենտրոնի 14.03.2016թ. թիվ 01/04.1/950-16 եզրակացությամբ արձանագրել է, որ «Էսկուլապ» ՍՊԸ-ի կողմից 27.10.2015թ հայտի 3.4 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Կենտրոնը միաժամանակ տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու պահից (27.10.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Էսկուլապ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.07.2016թ. թիվ 1/73-3/18983-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն 15.07.2016թ. թիվ 015/161 գրության համաձայն, վերջինիս կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգին «Էսկուլապ» ՍՊԸ-ն 06.07.2016թ.-ին մասնակցության հայտ է ներկայացրել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը՝ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել նշված մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

2. «Էսկուլապ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Ընկերությունը 30.01.2017թ. Կենտրոնին ներկայացրած դիմումով հայտնել է, որ «Ընկերությունը կատարում է ճշտումներ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հետ, իր՝ նախկինում ներկայացրած հաշվետվությունը ճշտելու վերաբերյալ: Նշված գործընթացը ավարտին հասցնելու համար, որը

կարող է էական նշանակություն ունենալ ընկերության մասով քննվող գործի համար՝ խնդրել է տալ ողջամիտ ժամկետ՝ հաշվետվությունների ճշտման գործընթացը ավարտին հասցնելու համար»:

3. «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը:

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ն 11.11.2015թ. թիվ 158 գրությամբ՝ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել Պատվիրատուի կարիքների համար կազմակերպված «ՆԻԿՀ-15/13-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Էսկուլապ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ֆինանսական միջոցների մասին հայտարարությունը և անհրաժեշտ փաստաթղթերը:

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-99/16 բողոքը քննող հանձնաժողովի 15.12.2016թ. ժամը 16:40-ին և 14.04.2017թ. ժամը 15:00-ին նշանակված նիստերին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-99/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 11.04.2017թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 22.07.2016թ. թիվ 1/73-3/18983-16 գրությամբ ներկայացված «Էսկուլապ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01215786) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել:

5. ՍՑ-ԳԲԽ-99/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 22.07.2016թ. թիվ 1/73-3/18983-16 գրությամբ ներկայացված «Էսկուլապ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Էսկուլապ» ՍՊԸ-ն 27.10.2015թ-ին մասնակցել է «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կողմից՝ դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման համար կազմակերպված «ՆԻԿՀ-15/13-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին:

2. Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով, 28.10.2015թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 06.11.2015թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Էսկուլապ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն ***(27.10.2015թ.)*** նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը ***(1,782,326,051 ՀՀ դրամ)*** գերազանցում է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը ***(1,444,162,587 ՀՀ դրամ)***:

4. ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.02.2016թ. թիվ 1/73-3/6818-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է սահմանված կարգով նախաձեռնել «Էսկուլապ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու գործընթաց:

5. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում Կենտրոնը 14.03.2016թ. թիվ 01/04.1/950-16 եզրակացությամբ արձանագրել է, որ «Էսկուլապ» ՍՊԸ-ի կողմից 27.10.2015թ հայտի 3.4 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

6. «Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն 15.07.2016թ. թիվ 015/161 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ «Էսկուլապ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 06.07.2016թ.-ին «Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար «50%, 30% զեղչով անվճար և հոգեմետ դեղորայքի» ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.07.2016թ. թիվ 1/73-3/18983-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 124-րդ կետի երկրորդ ենթակետը՝ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Էսկուլապ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն՝ ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.07.2016թ. թիվ 1/73-3/18983-16 գրությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի 11.11.2015թ. թիվ 158 գրությունը և կից փաստաթղթերը՝ հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում*** գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- *նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. ***հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.***

«Էսկուլապ» ՍՊԸ-ն 27.10.2015թ-ին մասնակցել է «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կողմից՝ դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման համար կազմակերպված «ՆԻԿՀ-15/13-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով, 28.10.2015թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 06.11.2015թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Էսկուլապ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն ***(27.10.2015թ.)*** նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը ***(1,782,326,051 ՀՀ դրամ)***

գերազանցում է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը ***(1,444,162,587 ՀՀ դրամ)***:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.02.2016թ. թիվ 1/73-3/6818-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է սահմանված կարգով նախաձեռնել «Էսկուլապ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու գործընթաց:

Կենտրոնի 14.03.2016թ. կայացրած թիվ 01/04.1/950-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է, որ «Էսկուլապ» ՍՊԸ-ի կողմից 27.10.2015թ հայտի 3.4 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Կենտրոնը միաժամանակ տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու պահից **27.10.2015թ-ից** հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Էսկուլապ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.07.2016թ. թիվ 1/73-3/18983-16 գրությամբ Կենտրոնին է ուղարկել «Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 15.07.2016թ. թիվ 015/161 գրությունը, ըստ որի վերջինիս կողմից կազմակերպված «15ՊՈԼ-ՇՀԱՊՁԲ-16/5» ծածկագրով գնման ընթացակարգին «Էսկուլապ» ՍՊԸ-ն 06.07.2016թ. մասնակցության հայտ է ներկայացրել «Էսկուլապ» ՍՊԸ-ն և հայտնել, որ անհրաժեշտ է սահմանված կարգով նախաձեռնել «Էսկուլապ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

ՀՀ ֆինանսների նախարարության 22.07.2016թ. թիվ 1/73-3/18983-16 գրության հիման վրա ձևավորած ՍՑ-ԳԲԽ-99/16 բողոքը քննող հանձնաժողովի 14.04.2017թ-ի ժամը 15:00-ին կայացած նիստի ժամանակ «Էսկուլապ» ՍՊԸ-ի տնօրեն Գ.Գրիգորյանը Խորհրդին ներկայացրեց 14.04.2017թ-ի գրություն, համաձայն որի Ընկերությունը «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կողմից՝ դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման համար կազմակերպված «ՆԻԿՀ-15/13-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին ներկայացրած հայտարարության մեջ

ամենևին միտում կամ նպատակ չի ունեցել ներառել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, այլ հիմք է ընդունել հետևյալը: Ըստ ծրագրի, մինչև հայտը ներկայացնելը «Էսկուլապ» ՍՊԸ-ի հիմնադիրները տեղեկացրել էին, որ հիմնադիրների կողմից 2014-2015թթ-ի ընկերության կողմից դեղերի ներկրումների՝ որպես շրջանառու միջոցներ ծավալը ընդլայնելու և մեծացնելու նպատակով պետք է կատարվեին համապատասխան ներդրումներ: Տեղյակ լինելով այդ ներդրումների մասին, որի արդյունքում ընկերությունը այլևս չէր ունենալու խնդիրներ հաշվապահական հաշվեկշռի մասով, ընկերությունը մասնակցության հայտ է ներկայացրել «ՆԻԿՀ-15/13-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով ընթացակարգին: Սակայն հայտը ներկայացնելուց հետո ներդրումը ուշացել է և կատարվել է միայն 2015թ-ի նոյեմբերին /այսինքն հայտ ներկայացնելու օրվանից հետո/ և գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 27.11.2015թ.: Ընկերությունը խնդրել է նկատի ունենալ, որ թուրիմացությունը պայմանավորված է եղել հայտը ներկայացնելուց հետո ներդրումների ծրագրերի փոփոխություններով և խնդրում ենք ներկայացված հայտարարությունը չորակել իրականությանը չհամապատասխանող և «Էսկուլապ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցիների ցուցակում:

Խորհուրդն, ուսումնասիրելով «Էսկուլապ» ՍՊԸ-ի տնօրեն Գ.Գրիգորյանի Խորհրդին ներկայացրած 14.04.2017թ-ի գրությունը և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Էսկուլապ» ՍՊԸ-ի հիմնադիրների կողմից 2014-2015թթ. Ընկերության կողմից դեղերի ներկրումների՝ որպես շրջանառու միջոցներ ծավալը ընդլայնելու և մեծացնելու նպատակով մինչև Ընկերության կողմից հայտ ներկայացնելը պետք է կատարվեին համապատասխան ներդրումներ, այսինքն ավելացվեին համապատասխան ժամանակահատվածների ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքները, սակայն հայտը ներկայացնելուց հետո ներդրումը ուշացել է և կատարվել է միայն 2015թ-ի նոյեմբերին /այսինքն հայտ ներկայացնելու օրվանից հետո/, ուստի Խորհուրդը գտնում է, որ նման փաստական հանգամանքների պայմաններում «Էսկուլապ» ՍՊԸ-ի կողմից կողմից 27.10.2015թ հայտի 3.4 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի կարող դիտարկվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում, քանի որ ներդրումների ծրագրերի փոփոխությունները կատարվեն են հայտ ներկայացնելու օրվանից հետո, ինչի մասին «Էսկուլապ» ՍՊԸ-ին օբյեկտիվորեն չէր կարող տեղյակ լինել մինչև հայտ ներկայացնելու օրը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 22.07.2016թ. թիվ 1/73-3/18983-16 գրության հիման վրա «Էսկուլապ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01215786) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու նպատակով գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնված ընթացակարգը մերժել և «Էսկուլապ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01215786) չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Վարդան Ավետիսյան**

Անդամ՝ **Հասմիկ Մնացականյան**